## ՎԱՆՈ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

Ծնվել է 1946թ., Նոյեմբերյանի շրջանի Կոթի (այժմ՝ Շավարշավան) գյուղում:
<<Ղարաբաղ>> կոմիտեի անդամ լինելով՝ 1989թ. դեկտեմբերին ձերբակալվել է: Մայիսին ազատվել է Մոսկվայի Բուտիրյան բանտից և շարունակել քաղաքական գործունեությունը:
1990թ. ընտրվել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, եղել է ՀՀՇ խմբակցության անդամ:
1990 -1991թթ. աշխատել է ՀՀ անտառտնտեսության վարչության պետ, 1991թ. նշանակվել է ՀՀ նախագահի խորհրդական, 1992թ.՝ ՀՀ ՆԳ նախարար:
1996թ. նոյեմբերի 14-ից մինչև 1998թ. փետրվարի 2-ը եղել է Երևանի քաղաքապետ:
1997թ. ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր և եղել <<Հանրապետություն>> խմբակցության անդամ:
1999թ. մայիսից մինչև 2001թ. նոյեմբերը եղել է ԱԺ պատգամավոր:
Եղել է ՀՀՇ վարչության անդամ, ապա՝ նախագահ:
ՀՀ գրողների և ժուռնալիստների միության անդամ է, <<Դրուժբա Նարոդով>> ամսագրի մրցանակակիր, մի շարք գեղարվեստական գրքերի հեղինակ: